ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՌԱՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Առատաշեն համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Առատաշեն, (0231)62328 aratashen.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 40

ԱՌԱՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի 4-րդ մասով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Առատաշեն համայնքի ավագանու 2020թվականի դեկտեմբերի 14-ի թիվ 12 արտահերթ նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՀԱՐՈՆՅԱՆ ՆԵԼԼԻ
ԵՐԱՆՅԱՆ ՍԵԴՐԱԿ
ԽԱՉԱՏՐՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՌԱՋՄԻԿ
ՄԱԿԱՐՅԱՆ ԳՐԻԳՈՐ
ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

Համայնքի ղեկավար՝ **ՎԱՀՐԱՄ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

Հավելված
Հայաստանի Հանրապետության Արմավիրի
մարզի Առատաշեն համայնքի
ավագանու 2020թվականի դեկտեմբերի 14-ի
Թիվ 12 արտահերթ նիստի N40 որոշման

ԱՌԱՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԹԻՎ 12 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳ

1. ԱՌԱՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ
2. ԱՌԱՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2021ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ
3. ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ
4. ԱՌԱՏԱՇԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ, <<ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ>> ՄԻԱՑՅԱԼ ՏՆՕՐԻՆՈՒԹՅԱՆ, <<ԱՌԱՏԱՇԵՆԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ>> ՀՈԱԿ-Ի ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ 2021ԹՎԱԿԱՆԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ
5. ԱՌԱՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՄԻԱՆՎԱԳ ԴՐԱՄԱԿԱՆ ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
6. ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՌԱՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Առատաշեն համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Առատաշեն, (0231)62328 aratashen.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 41-Ն

ԱՌԱՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2021ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետով, <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ, 9-րդ և 10-րդ հոդվածներով, 12-րդ հոդվածի 2-րդ մասով, հաշվի առնելով ՀՀ Արդարադատության Նախարարության պետական փորձագիտական եզրակացությունը և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Առատաշեն համայնքի վարչական տարածքում 2021թվականի համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:
2. Տեղական տուրքերի դրույքաչափերը հաշվարկելու համար կիրառել 0.75 գործակիցը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՀԱՐՈՆՅԱՆ ՆԵԼԼԻ

ԵՐԱՆՅԱՆ ՍԵԴՐԱԿ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՌԱՉՄԻԿ

ՄԱԿԱՐՅԱՆ ԳՐԻԳՈՐ

ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

Համայնքի ղեկավար՝ ՎԱՀՐԱՄ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի
մարզի Առատաշեն համայնքի
2020թվականի դեկտեմբերի 14-ի թիվ 12 նիստի
N41-Ն որոշման

ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՌԱՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2021ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ

1. Հայաստանի Հանրապետության համայնքներում սահմանվում են տեղական տուրքերի հետևյալ դրույքաչափերը.

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվության համար.

ա. հիմնական շենքերի և շինությունների համար՝

մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝ յոթ հազար հինգ հարյուր դրամ,

բ. սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ տասնհինգ հազար դրամ,
- 500-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ քսանհինգ հազար դրամ,
- 1000-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ քսանհինգ հազար դրամ,
- 3000-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ հիսուն հազար դրամ.

գ. ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝

- մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ մեկ հազար հինգ հարյուր դրամ,
- 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝երկու հազար հինգ հարյուր դրամ.

2) համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա. չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի

ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ մեկ հազար հինգ հարյուր դրամ,

բ. բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, և, բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափից, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով,

գ. նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը.

3) համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար՝ երկու հազար հինգ հարյուր դրամ.

4) համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ մեկ հարյուր հիսուն հազար դրամ.

5) համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում և կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի, մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ քառասունհինգ հազար դրամ.

6) համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առք ու վաճառք իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ երեսունյոթ հազար հինգ հարյուր դրամ.

7) համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝

ա. ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յոթ հազար հինգ հարյուր դրամ,

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ ինը հազար յոթ հարյուր հիսուն դրամ,

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասնհինգ հազար դրամ,

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասնութ հազար յոթ հարյուր հիսուն դրամ,

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ երեսուներեք հազար յոթ հարյուր հիսուն դրամ,

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յոթանասունհինգ հազար դրամ.

բ. ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յոթ հազար հինգ դրամ,

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ ինը հազար յոթ հարյուր հիսուն դրամ,

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասնհինգ հազար դրամ,

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասնութ հազար յոթ հարյուր հիսուն դրամ,

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ երեսուներեք հազար յոթ հարյուր հիսուն դրամ.

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յոթանասունհինգ հազար դրամ.

10) իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար՝ յուրաքանչյուր օրվա համար՝ երկու հարյուր յոթանասուն դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար.

11) համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

ա. առևտրի օբյեկտների համար՝ երեսունյոթ հազար հինգ հարյուր դրամ,

բ. հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ յոթանասունհինգ հազար դրամ,

գ. բաղնիքների (սաունաների) համար՝ երեք հարյուր յոթանասունհինգ հազար դրամ,

դ. խաղատների համար՝ յոթ հարյուր հիսուն հազար դրամ,

ե. շահումով խաղերի համար՝ երեք հարյուր յոթանասունհինգ հազար դրամ,

զ. վիճակախաղերի համար՝ մեկ հարյուր տասներկու հազար հինգ հարյուր դրամ.

12) համայնքի վարչական տարածքում, համայնքային կանոններին համապատասխան, հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

ա. հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ երեք հազար յոթ հարյուր հիսուն դրամ,

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ յոթ հազար հինգ հարյուր դրամ,

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ տասնմեկ հազար երկու հարյուր հիսուն դրամ,

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ տասնհինգ հազար դրամ,

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ քսաներկու հազար հինգ հարյուր դրամ,

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ երեսունյոթ հազար հինգ հարյուր դրամ.

բ. ոչ հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ յոթ հարյուր հիսուն դրամ,

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝մեկ հազար հինգ հարյուր դրամ,

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ երեք հազար դրամ,

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ վեց հազար դրամ,

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝տասնմեկ հազար երկու հարյուր հիսուն դրամ,

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ տասնութ հազար յոթ հարյուր հիսուն դրամ.

13) ավագանու սահմանած կարգին ու պայմաններին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար, յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար՝

ա. ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ մեկ հազար հինգ հարյուր դրամ,

բ. թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ երկու հազար վեց հարյուր քսանհինգ դրամ,

գ. սոցիալական գովազդի համար՝ զրո դրամ,

դ. այլ արտաքին գովազդի համար՝ հազար հինգ հարյուր դրամ,

ե. դատարկ գովազդային վահանակների համար՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25 %-ի չափով,

զ. եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 10 %-ի չափով.

14) Հայաստանի Հանրապետության համայնքների խորհրդանիշերը (զինանշան, անվանում և այլն), որպես օրենքով գրանցված ապրանքային նշան, ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝յոթանասունհինգ հազար դրամ.

15) համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար՝ յոթ հազար հինգ հարյուր դրամ.

16) համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ երեք հարյուր յոթանասունհինգ հազար դրամ.

17) համայնքի վարչական տարածքում մասնավոր գերեզմանատան կազմակերպման և շահագործման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

ա. 3 հա-ից մինչև 5 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ մեկ միլիոն ութ հարյուր յոթանասունհինգ հազար դրամ,

բ. 5 հա-ից մինչև 7 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ երեք միլիոն յոթ հարյուր հիսուն հազար դրամ,

գ. 7 հա-ից մինչև 10 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ հինգ միլիոն երկու հարյուր հիսուն հազար դրամ,

դ. 10 հա-ից ավել մակերես ունեցող գերեզմանատների համար՝ յոթ միլիոն հինգ հարյուր հազար դրամ:

2. Համայքում սահմանվում են տեղական վճարների հետևյալ դրույքաչափերը.

1) համայնքի տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և

հաստատելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ մեկ հազար դրամ

2) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված շինարարության թույլտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո շենքերի և շինությունների (այդ թվում՝ դրանց վերակառուցումը, վերականգնումը, ուժեղացումը, արդիականացումը, ընդլայնումն ու բարեկարգումը) կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ տաս հազար դրամ

3) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ տաս հազար դրամ

4) համայնքի տնօրինության և օգտագործման ներքո գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝հինգ հազար դրամ

5) համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ հինգ հազար դրամ

6) համայնքի վարչական տարածքում տոնավաճառներին (վերնիսաժներին) մասնակցելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ տաս հազար դրամ

7) համայնքի կողմից աղբահանության վճար վճարողների համար աղբահանության աշխատանքները կազմակերպելու համար աղբահանության վճարը համայնքի ավագանին սահմանում է «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով և դրույքաչափերի սահմաններում յուրաքանչյուր բնակչի համար ամսեկան մեկ հարյուր դրամ

8) համայնքի կողմից իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերին շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման, ինչպես նաև աղբահանության վճար վճարողներին շինարարական և խոշոր եզրաչափի աղբի ինքնուրույն հավաքման և փոխադրման թույլտվության համար աղբահանության վճարը ըստ զանգվածի համայնքի ավագանին սահմանում է հինգ հազար դրամ.

9) համայնքային ենթակայության մանկապարտեզի ծառայությունից օգտվողների համար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի չափով՝ հինգ հազար դրամ

10) համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ տրամադրելու համար՝ մեկ փաստաթղթի համար՝ հազար դրամ փոխհատուցման վճար:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՌԱՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Առատաշեն համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Առատաշեն, (0231)62328 aratashen.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 42

ԱՌԱՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետով՝

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Արմավիրի մարզի Առատաշեն համայնքի ղեկավարի ամսական վարձատրության չափը սահմանել 330 000 /երեք հարյուր երեսուն հազար/ դրամ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2021թվականի հունվարի 01-ից:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՀԱՐՈՆՅԱՆ ՆԵԼԼԻ

ԵՐԱՆՅԱՆ ՍԵԴՐԱԿ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՌԱԶՄԻԿ

ՄԱԿԱՐՅԱՆ ԳՐԻԳՈՐ

ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

Համայնքի ղեկավար՝ **ՎԱՀՐԱՄ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՌԱՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Առատաշեն համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Առատաշեն, (0231)62328 aratashen.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 43

ԱՌԱՏԱՇԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ, <<ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ>> ՄԻԱՑՅԱԼ ՏՆՕՐԻՆՈՒԹՅԱՆ, <<ԱՌԱՏԱՇԵՆԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ>> ՀՈԱԿ-Ի ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ 2021ԹՎԱԿԱՆԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Առատաշենի համայնքապետարանի, <<Կրթություն և մշակույթ>> միացյալ տնօրինության և <<Առատաշենի մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ի աշխատակիցների 2021թվականի թվաքանակը, հաստիքացուցակը և դրույքաչափերը՝ համաձայն հավելվածներ N1, N2, N3-ի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2021թվականի հունվարի 01-ից:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՀԱՐՈՆՅԱՆ ՆԵԼԼԻ
ԵՐԱՆՅԱՆ ՍԵԴՐԱԿ
ԽԱՉԱՏՐՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՌԱՉՄԻԿ
ՄԱԿԱՐՅԱՆ ԳՐԻԳՈՐ
ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

Համայնքի ղեկավար՝ **ՎԱՀՐԱՄ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

ՀԱՎԵԼՎԱԾՈՒ
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Առաստշեն համայնքի
Ավագանու 2020թվականի դեկտեմբերի 14-ի
թիվ 12 նիստի N43 որոշման

2021ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ
ԱՌԱՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ
ԹՎԱՔԱՆԱԿԸ,ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1.Աշխատակիցների թվաքանակը 11.

2. Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

Հ/Հ	Հաստիքի անվանումը	Հաստիքի միավորի դրույքը	Մեկ միավորի պաշտոնային դրույքաչափը	Հավելյալ աշխատավարձ	Մեկ աշխատողի աշխատավարձը
1.	Համայնքի ղեկավար	1	330000		330000
	Համայնքային ծառայողներ				
3.	Աշխատակազմի քարտուղար	1	238100	11900	250000
4.	Գլխավոր մասնագետ	1	234000	11700	245700
5.	Առաջատար մասնագետ	1	178000	8900	186900
6.	I կարգի մասնագետ	1	176000	8800	184800
7.	II կարգի մասնագետ	2	125000		125000
	Տեխնիկական սպասարկողներ				
8.	Օպերատոր կոմունալների գծով	1	92618		92618
9.	Խմելու ջրի հսկիչ - սպասարկող	1	105000		105000
10.	Օժանդակ բանվոր	1	92618		92618
11.	Այգեպան	1	92618		92618
	ԸՆԴԱՄԵՆԸ	11	1788954	41300	1830254

ՀԱՎԵԼՎԱԾ N2
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Առատաշեն
համայնքի ավագանու
2020թվականի դեկտեմբերի**14** -ի
թիվ **12**նիստի N43որոշման

2021Թ.

«ԱՌԱՏԱՇԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ «ԱՌԱՏԱՇԵՆԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ»ՀՈԱԿ-Ի ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1.Աշխատակիցների թվաքանակը 13.
2.Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

NN	Հաստիքի անվանումը	Հաստիքի միավորի թիվը	Մեկ հաստիքի Դրույքաչափը (ՀՀ դրամ)	Մեկ աշխատողի դրույքը	Մեկ աշխատողի Ամսական աշխատավարձը (ՀՀ դրամ)
1.	Տնօրեն	1	120000	1	120000
2.	դաստիարակ	2.24	110000	1.12	123200
				1.12	123200
3.	Երաժշ. դաստիարակ	0.5	110000	0.5	55000
4.	Բուժ.քույր	0.5	92618	1	92618
5	Խոհարարի օգնական	0.5	92618		
6.	Դաստիարակի օգնական	2	92618	1	92618
			92618	1	92618
7.	Հաշվապահ	0.5	92618	1	92618
8.	դռնապահ	0.5	92618		
9.	խոհարար	1	92618	1	92618

10.	պահակ	2	92618	1	92618
			92618	1	92618
11.	Օժանդակ բանվոր	0.5	92618	1	92618
12.	Պահակ	0.5	92618		
13.	լվացքարար	0.5	92618	1	92618
14.	Դռնապահ	0,5	92618		
	Ընդամենը			12.74	1254962

ՀԱՎԵԼՎԱԾ N3
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Առատաշեն
համայնքի ավագանու
2020թվականի դեկտեմբերի 14-ի
թիվ12 նիստի N43 որոշման

2021ԹՎԱԿԱՆԻ
ԱՌԱՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ
«ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ»ՄԻԱՑՅԱԼ ՏՆՕՐԻՆՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ
ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

Աշխատակիցների քանակը 6.
Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը.

NN	Հաստիքի անվանումը	Հաստիքի միավորների թիվը	Մեկ հաստիքի Դրույքաչափը (ՀՀ դրամ)	Աշխատողների թիվը	Մեկ աշխատողի աշխատավարձը ՀՀդրամ)
1.	Տնօրեն	1	95000	1	95000
2.	հավաքարար	1	92618	1	92618
3.	պահակ	1	92618	1	92618
4.	պահակ	1	92618	1	92618
5.	հաշվապահ	0.5	93960	1	46980
6.	Սպորտային հրահանգիչ	1	92618	1	92618
	ընդամենը	5.5	-	6	512452

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՌԱՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Առատաշեն համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Առատաշեն, (0231)62328 aratashen.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 44

ԱՌԱՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՄԻԱՆՎԱԳ ԴՐԱՄԱԿԱՆ ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 219-րդ հոդվածի առաջին մասի 2-րդ կետով՝

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Աշխատանքային պարտականությունները բարեխղճորեն կատարելու համար և իր ստեղծած կամավորական ջոկատով ռազմաճակատ մեկնելու և ռազմական գործողություններին մասնակցելու կապակցությամբ՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Առատաշեն համայնքի ղեկավար Վահրամ Հարությունյանին խրախուսել և տրամադրել միանվագ պարգևատրում մեկ ամսվա աշխատավարձի չափով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՀԱՐՈՆՅԱՆ ՆԵԼԼԻ
ԵՐԱՆՅԱՆ ՍԵԴՐԱԿ
ԽԱՉԱՏՐՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՌԱՉՄԻԿ
ՄԱԿԱՐՅԱՆ ԳՐԻԳՈՐ
ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

Համայնքի ղեկավար՝ **ՎԱՀՐԱՄ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՌԱՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Առատաշեն համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Առատաշեն, (0231)62328 aratashen.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ.

14 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 45

ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Առատաշեն համայնքի 2020թվականի բյուջեի 10.7.1-ի /սոցիալական օգնություն/ 4729 հոդվածից հատկացնել դրամական օգնություն՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՀԱՐՈՆՅԱՆ ՆԵԼԼԻ

ԵՐԱՆՅԱՆ ՍԵԴՐԱԿ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՌԱՉՄԻԿ

ՄԱԿԱՐՅԱՆ ԳՐԻԳՈՐ

ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

Համայնքի ղեկավար՝ **ՎԱՀՐԱՄ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

Հավելված
Հայաստանի Հանրապետության Արմավիրի
մարզի Առատաշեն համայնքի
2020թ. դեկտեմբերի 14-ի
Թիվ 12 նիստի N45 որոշման

ԱՌԱՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Գրիգորյան Արա Օնիկի	40000 (քառասուն հազար) դրամ
2. Գրիգորյան Հայկ Օնիկի	40000 (քառասուն հազար) դրամ
3. Գրիգորյան Արթուր Օնիկի	40000 (քառասուն հազար) դրամ
4. Ասատրյան Արմեն Անդրանիկի	40000 (քառասուն հազար) դրամ
5. Ղազարյան Անի Սաղաթելի	50000 (հիսուն հազար) դրամ
6. Միքայելյան Նունուֆար Սասունի	50000 (հիսուն հազար) դրամ

ԱՌԱՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԻՐԱՎՈՐՈՒՄ ՍՏԱՑԱԾ ԱՆՁԱՆՑ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Գեղամյան Մեխակ Ռոբերտի	50000 (հիսուն հազար) դրամ
2. Ներսիսյան Ներսես Վաչիկի	70000 (յոթանասուն հազար) դրամ
3. Մկրտչյան Գագիկ Զավենի	70000 (յոթանասուն հազար) դրամ
4. Ավագյան Կարեն Ռաֆիկի	70000 (յոթանասուն հազար) դրամ
5. Մարտիրոսյան Նարեկ Սիրեկանի	50000 (հիսուն հազար) դրամ